ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 10/20

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ, ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Բյուրեղավան 25 դեկտեմբերի 2020թ.

2020 թվականի դեկտեմբերի 25-ին, ժամը 14:00-ին, Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան բնակավայրում՝ Բյուրեղավանի համայնքապետարանի թիվ 1 վարչական շենքում, տեղի ունեցավ համայնքի ավագանու որոշումների նախագծերի և այլ առաջարկությունների նախնական քննարկման նպատակով ստեղծված ֆինանսական, բյուջետային և տնտեսական հարցերի մշտական գործող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստ՝ «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2021 թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին», «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի համայնքային ենթակայության կազմակերպությունների 2021 թվականի աշխատողների քանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին», «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին» որոշումների նախագծերի թեմաներով:

Նիստին մասնակցում էին Հանձնաժողովի նախագահ Արման Օհանյանը, անդամներ Արման Խանզադյանը, Արտյոմ Ավագյանը, համայնքապետարանի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Լիդիա Պողոսյանը, աշխատակազմի գլխավոր մասնագետ, զարգացման պատասխանատու Սարգիս Ղազարյանը, Հանձնաժողովի աշխատանքներին աջակցող համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ Զարուհի Ապրեսյանը:

Հանձնաժողովի նախագահը ներկայացրեց նիստի օրակարգը՝

1. «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2021 թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին»,
2. «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի համայնքային ենթակայության կազմակերպությունների 2021 թվականի աշխատողների քանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին»,

3. «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին» :

Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ, զարգացման պատասխանատու Սարգիս Ղազարյանը ներկայացրեց օրակարգի առաջին հարցը՝ ***«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2021 թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին»*** որոշման նախագիծը: Բյուրեղավան համայնքի 2021 թվականի տարեկան աշխատանքային պլանը (այսուհետ՝ ՏԱՊ) այն գործիքն է, որը թույլ է տալիս հիմնավորված, փաստարկված (արդյունքային ցուցանիշների միջոցով) կերպով գնահատել ՏԻՄ-երի և համայնքում գործող այլ կազմակերպությունների կողմից իրականացված ծրագրերի արդյունավետությունը մեկ տարվա ընթացքում՝ հիմք ստեղծելով համայնքի զարգացման հնգամյա ծրագրի ճշգրտման և հաջորդ տարիների պլանավորման և բյուջետավարման համար:

Բյուրեղավան համայնքի 2021 թվականի տարեկան աշխատանքային պլանը բխում է համայնքի 2018-2022 թվականների զարգացման հնգամյա ծրագրով նախատեսված՝ 2021 թվականին իրականացվող ծրագրերից:

Բյուրեղավան համայնքի 2021 թվականի ՏԱՊ-ը համայնքում առկա ֆինանսական, վարչական, մարդկային և սոցիալական ռեսուրսները կամ կապիտալները կառավարելու գործիք է, այն փաստաթուղթ է, ուր հստակորեն ներկայացվում են սոցիալական, տնտեսական, մարդկային, բնական և այլ ռեսուրսների ներդրման միջոցով համայնքի զարգացմանն ուղղված՝ տվյալ տարվա համար ՏԻՄ-երի ռազմավարությունները, ծրագրերը և միջոցառումները:

Բյուրեղավան համայնքի ՏԱՊ-ը մշակվել է հետևյալ հիմնական նպատակներով՝

- համակարգել ՏԻՄ-երի տվյալ տարվա անելիքները,
- սահմանել սոցիալ-տնտեսական զարգացման առաջնահերթությունները, գնահատել համայնքի ներքին ռեսուրսները, հաշվառել համայնքում ներդրվող արտաքին ռեսուրսները, հաշվարկել համախառն ռեսուրսները և բացահայտել պակասուրդը (դեֆիցիտը),
- համախմբել համայնքում տվյալ տարվա համար նախատեսվող բոլոր ծրագրերը և միջոցառումները ՀՀԶԾ-ով սահմանված՝ համայնքի տեսլականի և հիմնական նպատակների իրականացման շուրջ,
- շաղկապել նախատեսվող ծրագրերը և միջոցառումները դրանց իրականացման արդյունքների հետ՝ կիրառելով ՀՀԶԾ-ի ոլորտային ծրագրի «Տրամաբանական հենքը»,
- որոշակիացնել նախատեսվող ծրագրերի և միջոցառումների իրականացման ֆինանսական աղբյուրները և միջոցները, պատասխանատուները և ժամկետները, մշակել տվյալ տարվա ՏԱՊ-ի իրականացման ՄԳՊ-ը:

Բյուրեղավան համայնքի 2020թ. տարեկան աշխատանքային պլանը բաղկացած է 5 բաժիններից.

1-ին բաժնում սահմանվում է համայնքի տեսլականը և ոլորտային նպատակները:

2-րդ բաժնում ներկայացվում է համայնքի 2020 թվականի ծրագրերի ցանկը և տրամաբանական հենքերը (ըստ ոլորտների):

3-րդ բաժնում ներկայացվում է համայնքային գույքի կառավարման 2018 թվականի ծրագիրը:

4-րդ բաժնում ներկայացվում է համայնքի ՏԱՊ-ի ֆինանսավորման պլանը:

5-րդ բաժնում ներկայացվում է համայնքի ՏԱՊ-ի մոնիթորինգի և գնահատման պլանը:

Որոշվեց՝

հավանություն տալ *«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2021 թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին»* որոշ,ամ նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 3 Դեմ- 0

Օրակարգի երկրորդ՝ *«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի համայնքային ենթակայության կազմակերպությունների 2021 թվականի աշխատողների քանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին»* որոշման նախագծի շուրջ Լ. Պողոսյանը ներկայացրեց, որ նախագիծը կազմվել է՝ համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18–րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ *(Համայնքի ավագանին սույն օրենքով սահմանված կարգով համայնքի ղեկավարի ներկայացմամբ որոշում է ընդունում համայնքային հիմնարկների, համայնքային ենթակայությամբ առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունները, կառուցվածքը, աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու վերաբերյալ:)* և 35-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետերի *(Համայնքի ղեկավարը սույն օրենքով սահմանված կարգով համայնքային հիմնարկների, համայնքային ենթակայությամբ առևտրային և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատողների քանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի վերաբերյալ որոշման նախագծերն ու դրանցում առաջարկվող փոփոխությունները ներկայացնում է ավագանու հաստատմանը.)* և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2007 թվականի հունվարի 26-ի N 29-Ն հրամանի հավելված 1-ի 31-րդ կետը և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2014 թվականի հուլիսի 24-ի N 1791-Ա հրամանը, հաշվի առնելով Բյուրեղավան համայնքի ղեկավարի առաջարկը՝ համայնքի ավագանին հաստատում է Հայաստանի Հանրապետության

Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի համայնքային ենթակայության կազմակերպությունների 2021 թվականի աշխատողների քանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը:

Որոշվեց՝

հավանություն տալ *«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի համայնքային ենթակայության կազմակերպությունների 2021 թվականի աշխատողների քանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին»* որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 3 Դեմ- 0

«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին» որոշման նախագծի վերաբերյալ Լ" Պողոսյանը ներկայացրեց, որ որոշման նախագիծը մշակվել է՝ հիմք ընդունելով Բյուրեղավան համայնքի 2018-2022 թվականների զարգացման ծրագիրը և առաջնորդվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 32-րդ հոդվածի, 33-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով: Որոշման նախագծի ձևավորման հիմքում ընկած են խնայողականությունը, հաշվեկշռվածությունը, արդյունավետությունը և հստակությունը:

Համայնքի բյուջեի կառուցվածքը տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվող լիազորությունների և դրանց համապատասխանության ապահովման անհրաժեշտությունից ելնելով բաժանվում է վարչական և ֆոնդային մասերի: Եկամտային կանխատեսումներն ու ծրագրավորումներն իրականացվում են յուրաքանչյուր մասերի համար առանձին: Համայնքի բյուջեի պլանավորումն իրականացվել է համեմատական մեթոդով, որի ժամանակ հիմնվել ենք վերջին երեք տարիների ընթացքում փաստացի համայնքային բյուջե մուտքագրված եկամուտների հոսքի և առկա բազաների հիման վրա: Բյուջեն պլանավորված է նպաստելու համար համայնքի համաչափ և կայուն զարգացմանը, բարեկարգ, հարմարավետ և մատչելի միջավայրի ձևավորման շարունակականության ապահովմանը, համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների արդիականացմանը, բնակչության կենսական շահերի ապահովմանը:

Բյուրեղավան համայնքի 2021 թվականի բյուջեի նախագծում (այսուհետ՝ նախագիծ) եկամուտների և ծախսերի ընդհանուր գումարը ծրագրվել է 403 887.4 հազար դրամ, դեֆիցիտը (պակասուրդը) ՝ 0 դրամ:

2. Բյուջեի ծախսերի կանխատեսում

Բյուրեղավան համայնքի 2021 թվականի բյուջեի նախագծով ծախսերի ծավալը ծրագրվել է 403 887.4 հազար դրամի չափով: Ծախսերի ամբողջ ծավալի շուրջ 100.0 %-ը կամ 403 887,7 հազար դրամը բաժին է ընկնում ընթացիկ ծախսերին (վարչական բյուջե), 20 000 հազար դրամը՝ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերին (ֆոնդային բյուջե), իսկ ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերի գումարը կազմում է 20 000.0 հազար դրամ, դեֆիցիտը՝ 0 դրամ: Պահուստային ֆոնդը նախատեսվել է վարչական բյուջեի եկամուտների 20,0 %-ի չափով՝ ապահովելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 29-րդ հոդվածի պահանջները:

Ստորև ներկայացվում են համայնքի 2021 թվականի բյուջեի նախագծով ծրագրվող ծախսերի սկզբունքներն ու հիմնավորումները ՝ ըստ ծրագրի:

1) «Համայնքապետարանի աշխատակազմի պահպանում» ծրագրով ծախսերը նախագծում ծրագրվել են հիմնականում հաշվի առնելով գործող օրենսդրական պահանջները և խորհրդատվական բնույթ կրող նորմատիվները: Նախորդ տարվա համեմատ պահպանման ծախսերը ավել են պլանավորվել՝ հիմք ընդունելով խորհրդատվական բնույթ կրող նորմատիվները, ինչպես նաև հաստիքների աշխատավարձերի ավելացման և համայնքի բնակավայրերի վարչական շենքերի հիմնանորգման ծախսերի նախատեսումով:

Ոլորտի, մյուս ծրագրերում էական փոփոխություններ չեն կատարվել, ծախսերը պլանավորվել են հաշվի առնելով վերջին երեք տարիների փաստացի ցուցանիշները:

2) Բարեկարգ, հարմարավետ և մատչելի միջավայրի ձևավորման համար համայնքում ծրագրվել են կատարելու հետևյալ կապիտալ աշխատանքները՝

2.1) Փողոցների ասֆալտապատման և գծանշման աշխատանքներին հատկացվելու է ֆոնդային բյուջեի ծախսերի 17,8 %-ը, որը նախատեսված քաղաքում անվտանգ երթևեկություն ապահովելու նպատակով:

2.2) Համայնքի Ջրաբեր բնակավայրի խմելու ջրագծերի կառուցման շարունակության նպատակով 40277,4 հազար դրամ նախատեսվել աշխատանքների ավարտման համար :

Որոշվեց՝

հավանություն տալ *«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին»* որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 3 Դեմ- 0

Նիստն ավարտվեց:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Արման Օհանյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Արման Խանզադյան

_____ Արտյոմ Ավագյան